

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 8 ՄՃ.
Գաւառացի 10 ՄՃ.
Վերջածաւ Կ. Պոլսոյ 4 ՄՃ.
Գաւառացի 5 ՄՃ.
Օտար երկրներու 50 Պ.
Մանուկան տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դրշ է. աւելի անգամներու
համար գատ սակարկութիւն կըլ-
այ :

Խորաքանչիւր թիւ 2 զրնոց թուղթ.



ՀԱՆԱՊԱՁՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Պուրս գնացած լրագրաց հանրու-
ծախքը խորագրութեան վրայ է :
Լրագրոյ վերաբերեալ նամակ
կամ որ և ինչ գրութիւն խորագրի
— Տնորդին պիտի ուղղուի , Ղալա-
թիա Սանտրքճըլար Հաստիսի թիւ
198 , Նորո խան , Մասիսի դրասեն-
եակը :
Հանրու ծախքը չիճարուած նա-
մակ չընդունուիր :
Չտպուած նամակ , յողումով , կե-
տ չեն արուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿԱՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 6 ՓԵՏՐՎԱՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Թուրքիոյ երմտական բարենորոգ-
ման խնդիրն , որ վարչականն ոչ նը-
ւաղ կարեւոր , մանաւանդ անկէջ ա-
ւելի ստիպողական է , զի առանց ա-
նոր երկրորդին գործադրութիւնն ան-
հնարին է , յաջող լուծում մը կ'ըս-
տանայ :

Պ. Թուրքիոյ երմտական ծրագրին
հիմանց վրայ Բ. Դրան հետ կնքուած
երեք պայմանագրութիւնները փարի-
զի և Լոնտրայի սեղանաւորներէն ու
գրամատեններէն ընդունուած լինե-
լուն պաշտօնական պատասխանն՝ որ
այսօր կ'սպասուէր , կիրակի իրիկուն
Բ. Դրան հասաւ . հետեւեալ խնդ-
րերը վերջնական կերպիւ կարգադ-
րուած կրնայ համարուիլ :

Երմտական այս մեծ գործին կա-
տարման համար երեք պայմանագրու-
թիւն կնքուած է Բ. Դրան և Պ. Թուր-
քիոյ միջև , Մին՝ տէրութեան բոլոր
քօնաօրիտէ պարտուց և փոխառու-
թեանց միացման վրայ , երկրորդն 200
միլիոն ֆրանքի փոխառութեան , եր-
րորդն ալ Օսմանեան արժեթուղթ ու-
նեցողներուն փոխանորդող անդո-
գաւորական մասնախորհրդին ձեռք
կատարուելիք գործողութեանց վրայ :

Սոյն երրակի պայմանագրութե-
նէն կը տեսնուի որ պարտուց մի-
ացման խնդիրն համարաչափական ըս-
կըղբան վրայ հիմնուալ է , ոչ միայն
բոլոր պարտատէարց միջև , այլ և
պարտատէարց և պարտապանին մի-
ջև : Եւրոպայիք իրենց առնելեաց
գեղջուկներն փոխաբէն երկրին վար-
չութեան մէջ բաժին մ'ստանալով
կրնան՝ զօրեղ օժանդակ մը լինիլ Օս-
մանեան կառավարութեան՝ թէ՛ ել-
մտական վիճակը կանոնաւորելու և
թէ՛ հաստիքի ազդեցութիւնն աւելցը-
նելու մասին , որոյ գլխաւոր միջոցնե-
րէն մին ալ առեւտրական դաշնագրու-
թեանց վերաբնութիւնն է :

Ահաւաստի յիշեալ պայմանագր-
ութեանց արամագրութիւններն .

Ա.

Յօդ. 1. Տէրութեան թէ՛ ներքին
և թէ՛ արտաքին քօնաօրիտէ պարտուց
(ի բոլոր առեալ 1854ի , 1855ի , 1874ի
և 1877ի փոխառութիւնները) բանած
և անվճար մնացած տոկոսներուն գու-
մարին անուանական գինը պիտի չա-
փաւորի և իւրաքանչիւր փոխառու-
թեանց հրապարակաւ ստորագրու-
թեան գնոյն պիտի վերածի , այնպէս
որ վերածուելիք այլ և այլ փոխառու-
թեանց բաժնետէրերն իրենց հին ար-
ժեթուղթերը նորերու փոխուած ժա-
մանակ անոնց ստորագրութեան հան-
րած ժամանակի գնոյն հաւասար դու-

մար մը պիտի ստանան : Տոկոսեաց
դադարման օրէն ի վեր գլխավճար
ստացած արժեթուղթերն ալ նոյն կեր-
պիւ պիտի կարգադրին և նոյն չա-
փաւորումը պիտի կրեն :

1854ի , 55ի , 74ի և 77ի փոխա-
ռութիւններն , որ յատկապէս եգիպ-
տոսի տուրքով կամ Գաղղիոյ և Անգ-
ղիոյ կառավարութեանց կողմէ երաշ-
խաւորուած և արդէն պայմանագրու-
թեան մ'աւարկայ եղած են , սոյն
պայմանագրութեանէն դուրս են :

Քօնաօրիտէ եղած ուրիշ փոխա-
ռութեանց գումարին վրայ պիտի տ-
ւելնայ փոխառուած և նախնական Ֆէր-
մանին պայմաններով քօնաօրիտէ ե-
ղած դանձատուներուն (Պոստիւ թը-
րէզօր) գումարն . այսինքն այս նոր
փոխառութեան մէջ հարկերն հինգ-
բերող հին քօնաօրիտէներուն կարգը
պիտի անցնին և նոյն պայմանները
կրնն : Նոյնը պիտի լինի նաև Բուժ-
լիի երկվթուրեաց բաժիններուն հա-
մար :

Յօդ. 2. Վերոյիշեալ քօնաօրիտէ
պարտուց հին բաժնետէրութեան ամ-
բողջապէս վճարելու համար Օսման-
եան հարկերին 5 բերող նոր արժե-
թուղթ մը պիտի թահաւորուի , երկու
կարգի բաժնուած , որոյ մին պիտի
ստանալէ 1858ի , 60ի , 64ի , 63ի ,
65ի , 69ի և 73ի փոխառութեանց
բաժիններն , որք հարկերն 6 տոկոսով
հանուած , բայց միանալով չափաւոր-
ւած և հարկերին 5ի վերածուած են
ըստնախորհրդաց յօդուածին . իսկ երկ-
րորդ կարգը պիտի դասուին 1865 ին ,
73ին և 74ին եղած հարկերին 5 բերող հին
քօնաօրիտէները , 72ի դանձատուներ-
րն և Բուժլիի երկվթուրեաց բաժին-
ներն՝ որք միացուելով հարկերին 4էն
քօնաօրիտէ լինելէ ետեւ հարկերին 5
բերող նոր արժեթուղթոյ պիտի վերա-
ծին , այնպէս որ առաջին կարգին
հետ դասուելու համար չ'աւաճին յօդ-
ւածին մէջ նախատեսուած չափաւո-
րումն ստանալէ դատ , դրամադ լինի
վրայ հարկերին քսան նոր գեղջ մ'ալ
պիտի ստանան նախնական հարկե-
րին 6 և 5 տոկոսներուն միջև եղած
հարկերին 4 տոկոսի տարբերութեան
դրամագ լինի վերածուելուն փոխաբէն :

Յօդ. 3. Նոր քօնաօրիտէ պարտուց
տոկոսին և գլխամասին վճարումն
յարկաւէ և իւրաքանչիւր երաշխաւորեալ է
տէրութեան մնացորդանց և անուղ-
ղակի արոց հասցիւններով : Անուղ-
ղակի արոց կարգն են ձխախոտի , ա-
ղի հանքայ , գորշի , ոգիկի ըմպել-
եաց հասցիւններն . ասոնցմէ դատ
թէ՛մէթ թիւի արոց ներկայ յաւելու-
ածն և այլ նմանօրինակ տուրքեր , ո-
րոց ամենուն ալ հասցիւն նոր քօն-
աօրիտէ պարտուց տոկոսին և գլխա-
մասին վճարման պիտի յատկանայ բա-
ւական ըլլալիք գումարին հաւասա-
րութեամբ :

Իսկ հարկերին 6 տոկոսով այլ և այլ
փոխառութեանց յատկացեալ ուրիշ
ամեն հասցիւն Օսմանեան կառավա-
րութեան պիտի վերադառնան :

Կայսերական կառավարութիւնը
վերը նշանակուած յատուկ հասցիւ-
ներէն դատ , Դրգ. յօդուածին մէջ
յիշուած յանձնախորհրդին կը յանձ-
նէ հիմաւուց նաև հետեւեալ հասցիւ-
ներն՝ յատկապէս և միայն նոր քօն-
աօրիտէ պարտքին տոկոսներուն և գլ-
խամասին գործածուելու համար .

1. Պուլղարիոյ տուրքը .
2. Տէրութեան պարտքէն սոյն իշ-
խանութեան վրայ ձգուած մասը .
3. Միլենոյ պարտքէն Սերպիոյ և
Գարատաղի վրայ ձգուած մասը .
4. Արեւելեան Բուժլիի հասցիւ-
ներն , որք դանձուն պիտի յանձնը-
ւին իրեն Պէրլիի դաշնագրութեան
պայմաններուն համեմատ կարգադ-
րուած տուրք .

5. Կիպրոս կղզոյն եկամուտները ,
զորս Անգլիա թուրքիոյ պիտի վճարէ
1878 յունիս 4ի պայմանագրութեան
համեմատ , այնպէս որ սոյն հասցիւ-
ներն ու տուրքերն առանձնաշնորհու-
թեամբ յիշեալ քօնաօրիտէ պարտքին
վճարմանց պիտի յատկանան՝ տոկոս-
ներու և գլխամասի տարեկան վճար-
քին բաւելու չափ :

Ուստի յանձնախորհուրդը կը պար-
տի ամեն ջանք ընել սոյն դումարները
կանոնաւորապէս ձեռք բերելու հա-
մար , որք փոխանորդաբար իրեն կը
վերաբերին , և միշտ պիտի նկատուին
իրեն Օսմանեան կառավարութեան
հաշուին եղած վճարք՝ տոկոսներու
և գլխամասի տարեկան վճարումէն
հանուած :

Սոյն տուրքերուն և հասցիւնե-
րուն օրոշուած գումարն եթէ տարե-
կան վճարման չբաւէ , հարկ եղած
գումարներուն մնացած մասը մար-
սատան հասցիւններէն և յանձնախոր-
հրդին տուած ուրիշ տուրքերէն
պիտի առնուին : Մարտատան այս հա-
սցիւններէն , նոր փոխառութեան և
քօնաօրիտէ հին փոխառութեանց տո-
կոսներուն և գլխամասերուն վճար-
ման հարկ եղած գումարներն հան-
ւելէ ետեւ , յաւելուածը կայսերա-
կան դանձուն պիտի վերադառնայ :

Սոյն հասցիւններն ու տուրքերն
իրական արժէք ունեցող ոսկի և ար-
ծաթ գրամներով պիտի վճարին , և
վարը յիշուելիք յանձնախորհուրդը
պարտաւոր չ'ալուի լինի երբէք թըղ-
թադրամ և ուրիշ պիտակ դրամներ
ընդունիլ :

Եկամտից յատկացման երաշխա-
ւորութիւնն առանձնաշնորհութեամբ
ու առաջնութեամբ միւլենոյ եկամտից
վրայ 200 միլիոն ֆրանքի նոր փոխա-
ռութեան տրուած երաշխաւորութե-
նէն անմիջապէս ետքը կու գայ , այն-
պէս որ՝ նոր քօնաօրիտէ պարտուց ար-

ժեթուղթաւ երկրորդ կարգի դը-
րաւատէր պարտապահանջներ պի-
տի լինին՝ առաջին կարգը նոր պարտ-
քին վերապահուած լինելով , և վե-
րոյիշեալ փոխառութեան համար ո-
րոշեալ տարեկան վճարմանց հատու-
ցումէն անմիջապէս ետքը պիտի դան-
կրենց ոտանալիք վճարումները :

Յօդ. 4. Նոր քօնաօրիտէ պարտուց
տոկոսներն ոսկիով պիտի վճարին վեց
ամիսն անգամ մը Կ. Պոլսի , Փարիզ
և Լոնտրա : Առաջին կտրոնին տոկո-
սը ներկայ թուականէն հաշուելով եր-
րորդ ամիսն վերջը պիտի սկսի բա-
նիլ : Գլխավճարը վիճակահանութեամբ
պիտի կտտարի , Յրդ. յօդուածին մէջ
տրամադրեալ սեղանց համեմատ :

Գլխավճարը պիտի կտտարի կա-
ռավարութեան կողմանէ նոր պարտ-
քին վճարմանց յատկացեալ և յանձ-
նախորհրդին յանձնուած հասցիւնե-
րէն նոյն պարտքին տոկոսներուն վը-
ճարումէն յետոյ մնացած մասով :

Սոյն գլխավճարին քանակութիւ-
նը տէրութեան պիտի թէին մէջ նը-
շանակեալ հասցիւններուն համեմատ
պիտի հաշուի հետեւեալ համեմատու-
թեամբ .

Եթէ այս հասցիւններն՝ ամբողջ
պարտքին վարը նախատեսեալ գլխա-
վճարը կատարելու համար հարկեղած
գումարներուն ամբողջութիւնը չդո-
յացնեն , աղատ մնացած տարեկան
յաւելուածն առաջին կարգի արժե-
թուղթոյ վճարման պիտի գործածուի
այլու բենի կարգով և առաջնու-
թեամբ :

Յօդ. 5. Գլխավճարն այն ժամա-
նակ միայն պիտի սկսի երբէկայսերա-
կան կառավարութիւնն իւր տարեկան
պիտի թէին մէջ՝ վերը յուշուած և
նոր պարտքին յատկացած հասցիւ-
ներէն դատ՝ տասն և վեց միլիոն ոսկի
ունենայ : Սոյն գլխավճարին մեծադոյն
քանակութիւնը պիտի լինի 10/0 ,
և հետեւեալ կը պիտի պիտի հատուցուի :

Ոսկի

1/4 երբ եկամուտները լինին	16,000,000
2/4 " " "	17,000,000
3/4 " " "	18,000,000
4/4 (ամբողջ) " " "	19,000,000

Յօդ. 6. Եթէ տէրութեան ընդ-
հանուր հասուցից ամբողջ գումարն
և անոր հետ եգիպտոսի հարկին ներ-
կայ պարտաւոր յաւելուածն , և ա-
պագային մէջ ստեղծուելիք կամ ա-
ւելնալիք հասցիւններն , երրորդ. յօդ-
ւածին մէջ յիշուած և պարտուց տո-
կոսին ու գլխավճարին յատկացած
հասցիւններն ու հարկերը վար երթա-
լէ ետեւ՝ տէրութեան ծախքն ապա-
հովելու համար պէտք եղած Ա. մի-
լիոն Օսմ. լրիւ չ'ընտան գոյացնել 200
միլիոն ֆրանքի նոր պարտուց առանձ-
նաշնորհեալ տոկոսին և գլխամասին
վճարումէն ետեւ վերոյիշեալ հասցիւ-
նե-

Պէտք է գիտնայ Հայոց ազգը, որ օտար-
ներուն ամենն ալ համաձայն չեն Օսման-
եան կայսրութեան օգտինն ու հաշուցը
վրայ, ուստի պէտք է գիտնալ թէ այս
ազգաւորը դարմանը Օսմանեան կառավա-
րութիւնը միայն ի գործ պիտի կրնայ
գնել, որուն ամեն կարգի հասարակու-
թիւնը պէտք է գործակից ըլլան, որպէս
զի կառավարութեան գործը դիւրանայ .
այս նպատակաւ ահա երկու Քոմիտի-
կարգեցի, մէկը Եւրոպական Տաճկաստա-
նի համար, որուն նախագահը քրիստոն-
եայ փաշա մ'է, և միւսը Ասիական Տաճ-
կաստանի համար, որուն նախագահը
հարուստ և արդարասէր տաճիկ փաշա
մ'է . ասոնց լիազօր իշխանութիւնն պիտի
տամ որ մանրակրկիտ կերպով այդ չար-
եաց պատճառները քննեն և հեղինակե-
նը գտնելով անմիջապէս և առանց ա-
շտուութեան պատժեն . և այն բաները,
որոնց քննութիւնը կեդրոնին կը վերա-
բերի, պիտի տեղեկագրեն մեզ: Ասի-
ական Տաճկաստանի համար կազմեալ
Քոմիտիօնը Հալէպէն սկսելով Տիարպէ-
քի և Ասիոյ այլ կուսակալութիւնները
պիտի պտըտի. հոն ձեր ազգն ալ առիթ
կունենայ իւր ամբողջ ցաւերը փաստ ի
ձեռին ներկայացնել և դարմանը պա-
հանել, վստահ ըլլալով որ յանցապարտը
իրենց պատիժը պիտի կրեն. ձեր եպիս-
կոպոսներն, երևելիներն և ազգային պաշ-
տօնական մարմինները նոյն Քոմիտիօնին
կրնան ապագային բարոք կառավարու-
թեան միջոցներն ալ առաջարկել, զի քն-
նիչը պարտաւոր են զանոնք մտիկ ընել .
բայց այս բաները, ինչպէս կը տեսնէք,
զիրին չեն անմիջապէս գործադրել, և
դարաւոր զեղծումները քիչ միջոցի մէջ
բառնալ. ուստի ըսէք Հայոց ազգին որ
համբերէ և օգնէ մեզ մեր այս գծու-
րին պաշտօնին մէջ, Հայոց ազգը պէտք
է յիշէ որ այսչափ դարեք Օսմանեան տէ-
րութեան հովանեաց ներքե և իւր ազգու-
թիւնը և իւր ամեն աւանդութիւններն
ու սովորութիւններն անվիար պահած է:
պատմութեան մէջ դժուարին է գտնել
այնպիսի տէրութիւն մը որ այս նուիրա-
կան բաներն այսչափ պահպանած ըլլայ:

Միացեալ հեղինակ Ռոսոլ

Ղալաթիա 8 փետր. 1878.

... Խմբագիր Մասիս պատուական
լրագրոյ .

Ազատախօս Մասիսիդ վերջին շարաթ-
աւոր թուով ի նպատակ Ազգային Հի-
ւանդանոցի կարօտելոց յառաջիկայ չո-
րեքշաբթի երեկոյ տրուելիք պարահան-
դիւին յայտարարութեանն առթիւ, ձեր
առ Հայոց ողորմած ազգն ըրած հրահչը
գոհունակութեամբ կարգալէս յետոյ,
ազգային եռանդս իւր հեռակէտն հասաւ
երբ իմացայ որ Հայ մեծ վաճառական-
ներէն Մեծ. Ջանքեան Մկրտիչ Էֆէն-
տին՝ ժամանակիս դրամական անձուկ
միճակը չնկատելով, բարեհաճած է սի-
րով և փողթեօանդ յօժարութեամբ հա-
րիւր տոմսակ գնել և փոխարէնը հարիւր
Օսմ. լիրա * յանձնել իրեն ներկայացող
պատուարժան անդամոց մասնախմբին:

Յիրաւի մեծ և անստղիւտ ողորմասի-
րութիւն որ պատիւ կը բերէ թէ՛ ազգիս
արժանեացը և թէ՛ Մեծ. նուիրատուն
բոլոր գերդաստանին, որուն ի փոխարէն
ուրիշ բան չմնար մեզ ընել, այլ կցել
մեր սրտաբուխ աղօթքները նուիրատու
կարօտելոց շնորհապարտ միմունջին, ու
բովհեռեւ Համբաւոյ ոչ բիւրաւոր ականջ-
ներն, ոչ լեզուներն և ոչ փողն ունիմք
հռչակելու համար, և մասնաւոր որ Ջա-
նքեանէն Էֆէնտին սովորական փափա-
սըրտութիւն գիտնալով հանդերձ, որ միշտ
կը փափաքի այսպիսի պարագայից մէջ
անձամբ մնալ, և ո՞վ գիտէ թէ քանի՞
քանի անգամներ ազգը առանց գիտնալու
և դուշակելու երախտաւորտ մնացած է
գերդիւնեալ նուիրատու Էֆէնտինին. բայց
այս անգամ իրեւ. ազգային անհատ պարտ
անձին համարեցի գոհունակութիւն և
երախտագիտութիւն յայտնել հրապա-
րակաւ, և կր յուսամ, Խմբագիր Տէր, որ

* Վերջին իմացածնուս նայելով դոր-
ծին մէջ սխալմունք մ'եղած կերեի, գոր-
ծակալին չիղիչք ստուգել. Մ. Խմբ.

զուք ալ չէք մերժեր ներկայս հրատա-
րակել ձեր հիւրընկալ Էֆէնտին մէջ ի
բարի նախանձ և յօրինալ իւրաքանչիւր
անհատի և ի պարծանս Հայ Ազգիս:

Մնամ

Խմբագրութեան Գն

ԹՂԱՅՈՒԹԻՒՆՔ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՑ

Ի Խարբերդ. 8 յունի. 1879

... Խմբագիր Տէր, Մասիս ազ-
գօգուտ լրագրոյ .

78 հոկտ. 3-ին վերջին Ձեզի նամակ
գրած չեմ, և ոչ ձեզմէ նամակ առած
եմ: Դեկտեմբերի վերջերը Տօրոս լեռ-
նէն Խարբերդ եկանք, որպէս զի բան-
տարկեալ քիւրտերուն վճիռները տըր-
ուի, որոնք 101 անձինք են: Այլ Ծէ-
ֆիք պէյի կարգադրութիւնքն աղ-
քատաց օգտակար չեղան այնչափ,
որքան կը յուսացուէր: Բ. Դուռը վայն
հրաժարեցնելով, նորա պաշտօնը չոր-
րոր բանակին սպարապետ վսեմ.
Տէրվիչ փաշային յանձնեց: Տէրվիչ
փաշան այս կողմերուն աւելի տեղ-
եակ ըլլալով օգտակար կարգադրու-
թիւնք կը յուսացուին:

Գրիի Բալուի և ընդ նմին Ձը-
միշկաժագի և այլն գիւղաքաղաքներ-
ը լքեալ վիճակի մէջ կը մնան ցարդ-
նիւթապէս ճնշեալ քիւրտերէ և այլ և
այլ ցեղերէ ու խել մ'անհաւատարիմ
պաշտօնատարներէ. իսկ բարոյապէս
բոլորովին յետա մնացած. դպրոցի
և դաստիարակութեան երբեք հոգ-
ատնող չիայ. Բալուի Նաթանեան Պօ-
ղոս վարդապետը հրաժարեցնելով
Սարգիս վարդապետը փոխանորդ կար-
գուած է. Սարգիս վարդապետն ալ
դպրոցատէր կըրտական մը չէ, քանի
որ Խարբերդի մէջ դպրոց մը բացած
չէ:

Գրիի խորէն վարդապետը ցարդ-
նիւթի գարման մը չըրաւ կամ չուղեց
ընել, որ ամենէն աւելի յետադէմ
վիճակի մէջ է, և ամենէն աւելի կա-
րօտ նորոգութեան. յիշեալ դաւա-
ռէն եկած գիր մը սովի սպառնալիք-
ներ կը յայտնէ և ընդ նմին բնիկ
պէյերէ և Գուրդերէ շատ հարստա-
հարութիւնք և նեղութիւնք կը
պատմէ, որոց քաղուածը պիտի գը-
րեմ վսեմ. Տէրվիչ փաշային՝ անմի-
ջական անօրինութիւն խնդրելով:

Չմիշկաժագի Պետրոս վարդապե-
տը շատ դպրոցատէր տեսի. բայց իր
խօսքը չկրնալ ընել տալով Պօլիս գի-
մեց օգնութիւն խնդրելու: Արդարեւ
արժանի է օգնութեան և նպատի
այն քաղաքը, նոյնպէս բոլոր Հա-
յաստան:

Հոս չեմ ուղեր մոռնալ Չմիշկաժա-
գի վեց գիւղերու, Կարմիր, Մասնոս,
Հաղարի, Միատուն, Սինե ևն, որոց
եկեղեցիքը պայծառ և դպրոցները
քիչ շատ բարեկարգ տեսի. մինչև
իսկ դրասեղան և նստարան ունէին,
մինչդեռ շատ մը գաւառաց դպրոց-
ներ գեանի վրայ կը նստեցնեն խեղճ
մանկտիւր և օրիորդք:

Չարսանձախի 60 հայաբնակ գիւ-
ղերուն մէջ դպրոց մը անգամ չկար.
մեր քառամնայ աշխատութիւնն
հազիւ երկու երեք գիւղի ազգե-
ցութիւն ըրաւ. բայց և այնպէս ժու-
ղովրդոց դադաւարը դպրոցի վրայ
հակեցաւ. քիչ մը աշխատութիւն և
զոհողութիւն պէտք է այս վիճակին
Այս դաւառն հինօրեայ կալուածա-
կան խնդիր մ'ունի տեղացի բունա-
ւոր աղայից հետ. Այլ Ծէֆիք պէյը
որ պաշտօն ունէր, չլուծեց այս կեւ-
սական խնդիրը. բայց կը յուսամ որ
Տէրվիչ փաշան պիտի լուծէ համա-
ձայն տէրութեան արդար կանոնաց
և յօգուտ երկրադոքճ (ոտրուկ) ժու-
ղովրդեան:

Տօրոսի վրայ երկար չպիտի կըր-

նամ գրել: Այս մասին ո՞րքան ու-
րախ եղալ երբ Մասիսի մէջ կարգացի
թէ Մ. Պատրիարքի հրամանաւ Արա-
րատեան բազմաբղիւն ընկերութիւ-
նը դպրոց մը պիտի բանայ: Այդ
ձեռնարկին ո՞րքան կարեւորութիւն
ունենալն արդէն յիշած եմ, և կը
կրկնեմ որ այն երկրին համար քանի
մը դպրոցներ և դասատուներ պէտք
են. քանզի ինչ օգուտ կրնայ ընել
բարեկարգութիւնն՝ երբ ժողովուր-
դէն իր կրօնքին ու լեզուին ծանօթ
չէ: Մեծ-կերտ գիւղաքաղաքին մէջ
հարսանեաց հանդէս մը եղաւ, որ
շատ հետաքրքրական էր. ուրիշ առ-
թիւ ձեզ կը պատմեմ. այժմ կը
խնդրեմ որ ամեն Հայ իւր լուծայն
չի խնայէ Արարատեան ընկերութեան
յանուն Տօրոսի բանած հանգանա-
կութեան, որպէս զի յառաջիկայ
դարնան յաջողմը դպրոցներ բա-
նալու:

Արարատեան ընկերութեան մեզ
նամակ մը գրուած ըլլալը լսեցի, բայց
ցարդ ձեռքս հասած չէ որպէս զի
պատասխան գրելի, քանզի Տօրոս լե-
ռնն այժմ ոչ սուրհանդակ ունի և
ոչ կանոնաւոր երթեւել. կը յուսամ
թէ դարնան ամեն բան կարգի կը
մնայ:

Տօրոսի մէջ վանք մը կայ Ալեոր
Սուրբ Կարապետ անուն, ամեն տարի
քուրդերն այդ վանքէն կուռնէին 400
քիլէ (Պօլսոյ) ցորեն, և շատ նեղու-
թիւն կուտային, այս տարի ինսով
չափ աղատեցաւ բոլորովին աղատե-
լու յուսով. նաեւ Բալուի Բաղդրա-
հայեաց Ս. Աստուածածնի վանքը, որ
քրդաց բարբարոսութենէն ու առաջ-
նորդաց անհոգութենէն աւերակ ե-
ղած է վերը յիշուածին պէս: Աստեք
այնպիսի վանքեր են, որ ունին ար-
տեր, այգիներ, անտառներ, ջուրեր,
մարդագետիկներ, և խիստ գեղեցիկ
գիրքեր, և կրնան գիշերօթիկ վար-
ժարաններ ունենալ:

Խարբերդ, ի հնու մի Գարբերդ,
բարձր լեռան մը գագաթը շինուած
է բնական քարէ բերդի մը բոլորով-
քը. օդը խիստ առողջարար է. 700
Հայու տուն կայ, 100 տուն Ասորի,
150 տուն Հայ բոլորական և մնա-
ցածն իսլամ Հայերը ունին չորս եկե-
ղեցի և չորս դպրոց, որոց առաջինն
է Սմբատեան ընկերութեան վարժա-
րանը. այս ընկերութիւնը 14 տարի-
ներէ ի վեր կը շարունակէ իւր ըն-
թացքը օրէ օր յառաջանալով. տա-
րեքարձի հանդիսին ներկայ էի, որ
բաւական չեղէր. աղջկանց վար-
ժարան չունենալին առիթ բերելով
քանի մը խօսք ըսի, զոր հաստատեց
առաջնորդը, և անմիջապէս հանդա-
նակութիւն մ'ըլլալով 6000 դրուշի
ողջ թղթադրամ դումարեցին, որ
թերեւ 20000 կրնայ հասնել, և ու-
րուցեցին աղջկանց վարժարան մը բա-
նալ: Գիւղերէն շատին մէջ դպրոց չը
կայ, եղածներն ալ ա, բ, գ, կը կար-
դացնեն, և ոչկարի գումէն տարբե-
րութիւն չունեն. բայց մեծ մեծ ե-
կեղեցիներ ունին. Գէսիլիկ գիւղն
ուր 500 տուն Հայ կայ, երկու միլիոն
ծախսով հոյակապ եկեղեցի մը շին-
ւած է երկաթեայ վանդակներով ու
մարմարեայ ոսկեգօծ քարերով, մեծ
մասամբ Խաղճեաններուն շնորհիւ,
բայց աւաղ որ դպրոցը շատ յետ-
նեալ վիճակի մէջ է:

Մէղրէ գիւղն օր կառավարութեան
կեդրոնն է, և ուր հարուստ ազգա-
յինք կը բնակին, մանչեքու մասնա-
ւոր դպրոց մը կայ, որ տարին միայն
30 թուղթ ծախս ունի. ասոր վրայ
վերջը կը գրեն:

Հիւսիսի գիւղն ունի բաւական
դպրոց մը շնորհիւ ընկերութեան:
Մ. Պատրիարքին կրնալ անոր քա-

ջայերութիւն մը տուաւ ընկերու-
թեանը. երանի թէ ամեն ազգային
այս պէտքն զգար և ամեն ոք իւր
պարտքը կատարէր, այն ատեն Հա-
յաստան կը լուսաւորուէր:

Խարբերդ չորս վանք ունի, որոց
եկամուտը կարծեօք 400 ոսկի կը
հասնի, բայց ազգին 4 փարայի օգուտ
չունին. լաւ կըլլայ եթէ այս վանքե-
րը Սմբատեան ընկերութեան կամ
Հոգաբարձութեանց յանձնուի և ա-
տնց եկամուտը կեդրոնական աղբը
կանց վարժարանի մը յատկանայ, փո-
խանակ պրերդ կըրտականաց կեր ըլ-
լալու: Առաջնորդական խնդիրը խիստ
տխուր է. բնիկ երեք վարդապետ
կայ, Գեորգ, Սարգիս, Պետրոս, միմ-
եանց ազգական և միմեանց հակա-
ռակ. այնպէս որ, առաջնորդութեւ
նրն ասոնց որուն որ յանձնուի, միւս
երկուքն արդեւ կըլլան անոր գոր-
ծոց: Իսկ դուքսն երկուքերուն երեքը
մէկէն խոչընդոտ կըլլան: Եկողն ալ
անշուշտ կը շուարի: Պատրիարքա-
րանն այս մասին իմաստուն տնօրէ-
նութիւն մ'ընելու է. եթէ միջոց ու-
նենամ տեղեկագիր մը պիտի ըլլեմ:

Տեղոյս իսլամ՝ Գրիստոնեայ
ժողովուրդը իրարու հետ սիրով են և
հաւատարիմ հպատակ վեհ. Սուր-
թանին, բայց մեծ մասամբ դժգոհ
կառավարութեան ընթացքէն, և մա-
նաւանդ քանի մը պաշտօնատարնե-
րէ, որոնք երկար ժամանակէ ի վեր
իրենց պաշտօնը զօլաքաղութեամբ
կը շարունակեն. ժողովուրդը դեռ
իր ձայնը ընել տուած չէ արդարու-
թեան:

Տօրոսի և Խարբերդի վրայ շա-
րունակութիւն խոստանալով,

Մնամ Ձերդ...

Կեղեցի Ս. Ղալաթեան

ԵՔԵՂ ՊԱՐԱՀԱՆԻՍ

Ի ՆՊԱՍՏ ԱԶԴ. ՀԻՄՆԵՐԱՆՈՑԻ ՀԱՅՈՑ

7/19 փետր. 1879 Չորեքշաբթի գիշեր
ժամ 4 1/2

ՅԵՆՏՐԱՍՏՈ ԲԵՐՍ.

Անդամ Մանուկ

Վսեմ. Մաքսուտեան Սիմոն պէյ.
Նախագահ.

Մեծ. Մանուկեան Սեդեքիմ էֆէնտի
Գեր-Նախագահ.

» Եւսուֆեան Տիգրան
Քարտուղար.

» Նորատունկեան Յարութիւն
Գանձապետ.

» Մէրեթմ-Գուրի Յարութիւն
Գննիչ.

Մեծ. Բարադամեան Տիգրան էֆէնտի.

» Գալլեան Պապիկ »

» Գարակէօղեան Գրիգոր »

» Գրիգորեան Ռուբին »

» Էֆէնտեան Գաբրիէլ »

» Թաճեան Սարգիս »

» Թիւրքիստեան Անտոն »

» Կիրտեան Աւետիս »

» Կիւմուշեան Ռուբին »

» Ղազարուսեան Սահակ »

» Միքայէլեան Պետրոս »

» Յովսէփեան Կարապետ »

» Շահպաղեան Եղիա »

Վսեմ. Շահպաղ Կարապետ »

Մեծ. Պէյրեան Եղիա »

» Սէլիմէճեան Գրիգոր »

» Սերովեան Յարութիւն »

Ի Լ Ս Ն

Նիզամիյի Մարաճհանէ անպարըն-
տա խմբ. օլունմաքտա պուրնան
միւ հիմնալը սարաճիչէ իւր ու մի պրոյ-

ԲՈՍՓՈՐԷՆ ԻԶՆՈՂ ՇՈՒԵՆԱԽՆԵՐԸ

1 45 Պէժքօղ, Բաշապ, Գանձըճա, և, Հիւսար, Գանձորլիլի, 21
վանիբէյ, Զնիկթէյ, Պէյլէրպէյ, Գուզկ.
(Փետր. 15ձն ժամ 1 1/2ին);


1 45 Արնաւ, վանիբէյ, Զնիկէ, Պէյլէր, Գուզկ, Գապ : 2
(Փետր. 15ձն ժամ 1 1/2ին);

2 Ը և Ա. Գավաշեան Մշակար, Պէյլէր, Թար, Պէժքօղ, 33
Բաշա, Գանձ, Ա. Հիւսար, Գանձու, վանիբէ, Զնիկէ,
Պէյլէր, Գուզկ; (Փետր. 15ձն ժամ 1 3/4ին) :

ᐃᐱᐱᐱᐱ ᐱᐱᐱᐱ



Տօքթոր Այերի ջերմի դեղը ամեն ու իյէ առօրեայ ջերմ իսկայն կը բռնէ, չկայ դեղ մը որ ասոր չափ օգտակար ըլլայ ջերմի։ ջերմ բռնողները պարագայ տեղը կը տանջուին քանի որ աս դեղը կայ, պէտք է որ ան միմայեւս անկէ գործածեն։ Արդէն Պօլսոյ և դաւառներուն մէջ ճանչցուած է աս դեղը ու անոյ բռնկողները գիտեն անոր յարգը։ Նախ ութը տրամի չափ ֆէր Ե-դէ խմելու է իւրը մաքրողական դեղ ու ետքը աս ջերմի դեղն (ջերմը չբռնած) օրը չորս անգամ մէյմէկ անուշիկ դրդող ջուրի հետ խառնելով խմելու է, անմիջակայս կանցնի։ Տղայոց աւելի քիչ տալու է. կը ծախուի Կ. Պօլիս Դավթիս Միհաստեան և ընկերաց Ամերիկայի մագաղան։



Աղնիւ և հասարակ քարեօղաներ
երկաթէ և արդոյէ, աժան գիներով
կը ծախուի, Կ. Պօլիս Կալաթիա Մի-
նասեան և ընկերաց Սմերիկայի մա-
ղաղան :



Այս ձև իւթիւններուն ամենէն տ-
ղէկ տեսակը որուն մէջ կրակը չը մա-
րիւր և աղէկ կը գործէ , կը ծախուի
կ. Պօլիս Ղալաթիս Մինասեան և ըն-
կերաց Ամբրիկայի մաղաղան:

3 15 Իւսկ, Գուգ, Պէյլ, Չէնկ, Արնալ, (Բացի ուրաթէ) : 21
9 45 Գուգի, Պէյլէրու, Չէնկ, Վանիք, Գանտ, Ա, Հիսար, 33
Գանկ, Բաշապ, Պէյքօղ, Պէյլիքտ, Մէզարու, Բ, Է
Ա, Գալաթ :
40 30 Գալաթ, Գուգի, Պէյլ, Չէնկ, Վանիք, Գանտ, Ա, 34
Հիսար, Գանկ, Բաշ, Պէյքօղ, Թարապ, Պէյլիքտ,
41 40 Գուգի, Պէյլ, Չէնկ, Վանիք, Գանտ, Ա, Հիսար, 24
Գանկ, Բաշապ, Պէյքօղ :
41 40 Գալաթ, Գուգի, Պէյլ, Չէնկ, Վանիք, Պէյլէք : 22

Ունեն ուրաւաթ առաւօտ ժամ 4ին կամուրջէն շող ենաւ մ'եւ-
նելով իւսի, Գառի, Պէյլ, Զէնիէ, Վանի, Գաւառ, Ա. Հիսար,
Գանշ, Բաշապ, Համդիպելով Պէյքօղ արևոտ երթոյ, և ժամը
1/2 լինէ Պէյքօղէն արևոտ ելնէ և յիշեալ նաւամարտոյցներն համա-
ղ իսկելով կամուրջ արևոտ յերազմանայ :

Լրագիրս տմեն օր կը հրատարակուի՝
բաց 'ի կիրակի և տօն օրերէ :

Բաժանորդագրույթեան տեղն է Ղաւթիա Սանտրդճըլար Ճատեշտի թիւ 198, Նորո խան Մասիսի խմբագրատունը : Իսկ գաւառացի մէջ հետեւեալ հոգաբարձուաց գրասենեակները .

ԶՄԻՒՆԻՍ, Ստեփան էֆ. Տէտէեան.
ՆԻԿՈՄԻԴԻԱ, Խորոզմ » Էսկիճեան.
ՊՐՈԽՍ, Ստեփան էֆ, Թանկէրեան.
ՌՈՏՈՍԹՈ, Արժ. Տ. Արիստակէս ա.
Էագ. քահանայ Ֆէյրեան.

ԱԴՐԻԱՆՈՒԳՈՒԽՍ.

ԱՄՄՈՒՆ.

ՏՐԱՊԵՉՈՆ.

ԱՍԽԱՏԱՆՈՒԹՅԱՆ
ՄԵԼՈՒՄԻՆ

ՆԵՐՍԵՍԻՆ,
ԷԿԶՈՆԻՆ,

ԽԱՐԵՆՐԴ:

ԵՐԶՆԿԱ. Թաղէս էֆ. Բաղրատունի.

ԿԱՐԱՅԻՆ. Կարապետ » Զաքարեան .

ՄՈՒՇ. Մկրտիչ » Փօթիկերան.

4115.

ՅԵՐԵՄ. Սեղրակ Ե խորանքան :

ՏԵԳՐԱՆԻԿԵՐՏ, Թմ/մաս 13, Թաշ-

 5 kmh

1911.

IFULCUL:

ՅՈՒՆԻՄ, ՅԷՐԶԱՅԱՆ ԿՈՍՏԱՆ Ե. ՅԷՐԶԱՅԱՆ,

Էմմա :

ՏժԽԻԼ. Պ. ԿԵԼՈՐԱՍՏՆԻ Տ. ՂԵՐՆԵԿԱՆ.

ԵՄՄԵԼԻԱՆ. Քեզոցս ասա՝ Լեւիւկան:

901, 901^a 67 900/100 202^a 254/100 202^a